Զավեն Սմբատյան
Հայաստանի եվրոպական համալսարանի դասախոս,
Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության
վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժնի պետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու
Էլ.հասցե՝ zavensmbatyan@mail.ru

DOI: 10.53614/18294952-2025.2-37

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Հոդվածում քննարկվում են վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետի ինստիտուտի էությունը և վաղեմության ժամկետի լրանալը՝ որպես վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանք, դրա կիրառման պայմաններն ու ոլորտում առկա խնդիրները: Քննարկվում են նաև հարցի առնչությամբ կայացված նախադեպային որոշումները:

Հոդվածի խնդիրը քննարկվող ինստիտուտի շուրջ համակարգային ուսումնասիրությունների իրականացումն է հետազոտության նպատակին հասնելու համար:

Սույն հոդվածի նպատակն իրավական հետազոտության հիման վրա հակաիրավական գործողություն կատարած կամ անգործություն դրսևորած անձի վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով վարույթի բացառման հնարավորությունից օգտվելու առնչությամբ, այդ ժամկետների էության, ինչպես նաև հաշվարկի վերաբերյալ միասնական դատողությունների ամրագրումն է, ինչպես նաև տեսական և գործնական փորձի հիման վրա առավել արդյունավետ և հատկանշական կարգավորումների խարսխումը ՀՀ գործող օրենսդրական դաշտում:

Հոդվածում քննարկվում է այնպիսի հարց, որն այս կամ այն չափով արտացոլում է ստացել տարբեր հեղինակների աշխատություններում, սակայն թեմայի բովանդակությունը

կազմող ինստիտուտի շուրջ ծառացող հիմնախնդիրների վերաբերյալ առանձին համալիր գիտական քննարկման ու իրավական վերլուծության առարկա չի եղել, ինչը փորձ է արվել կատարել սույն աշխատանքում:

Սույն աշխատանքի արժեքն ու գործնական նշանակությունը, ինչպես նաև նորույթը դրսևորվում է վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետի ինստիտուտի շուրջ միասնական ընկալումների ձևակերպմամբ և առկա կարգավորումների լավարկմամբ:

Հիմնաբառեր. վաղեմություն, պատասխանատվություն, վարչական, բացառող, իրավախախտում, ժամկետ:

Ներածություն

Վարչական իրավունքը հանրային իրավունքի առավել տարածված ճյուղերից մեկն է, որի շրջանակներում առանցքային դերակատարում ունի վարչական պատասխանատվության ինստիտուտը:

Սույն աշխատանքի ուսումնասիրության օբյեկտն իրավական հարաբերություններն են, որոնք ծագում են վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետի որպես վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանքի կենսագործումից:

Վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետի որպես վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանքի վերաբերյալ հետազոտությունը պատկերացումներ է տալիս հանրային իշխանության գործունեության բարելավման վերաբերյալ: Բացահայտելով լավագույն փորձը՝ քաղաքականությունը մշակողները կարող են նպատակաուղղված միջամտություններ իրականացնել՝ բարձրացնելու այս ինստիտուտի կիրառման արդյունավետությունը:

Վարչական պատասխանատվության միջոց կիրառող վարչական ակտը հանդիսանում է հանրային բնույթի իրավահարաբերության շրջանակներում վարչական մարմնի կողմից արտահայտված էմպիրիկ կամքի դրսևորում, որը կազուալացնում է աբստրակտ բնույթի իրավահարաբերություններն ազդելով անձանց բնականոն կյանքի, գործունեության և իրավական կարգավիճակների վրա:

Վարչական պատասխանատվության ինստիտուտն իր ուրույն տեղն ունի վարչական իրավունքի համակարգում՝ պայմանավորված նաև այն հանգամանքով, որ վարչական պատասխանատվությունը հանդիսանում է այն ուղիղ գործիքը, որով պետահիրավական լծակներով օժտված մարմիններն ազդեցություն են գործում զանցանք կատարած անձի բնականոն կենսագործման վրա՝ որոշակի պատժամիջոցի կիրառման եղանակով, որի շրջանակներում անձանց իրավունքների երաշխավորման հիմնական միջոցներից մեկը հենց վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետների ինստիտուտի վերաբերյալ միասնական դատողությունների ամրագրումն է:

Սույն հոդվածով փորձ է արվելու իրավական հետազոտության հիման վրա առաջադրել բարձրացված խնդիրներին տեսական և գործնական լուծումներ:

Մեթոդ

Սույն ուսումնասիրության մեթոդական հիմքը ձևավորվում է ֆորմալ տրամաբանական և ֆորմալ իրավական մեթոդներով, համակարգային կառուցվածքային, տեխնիկական, համեմատական և իրավական վերլուծության մեթոդներով, որոնք օգտագործվել են ուսումնասիրության, համակարգման, հասկացությունների և իրավական բովանդակությունների բացահայտման ընթացքում:

Արդյունքներ

Ինչպես գիտենք՝ վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետներն առարկայական դերակատարում ունեն ներկայումս գործող կառուցակարգերի տեսանկյունից և հետապնդում են անձանց իրավունքների պաշտպանության նպատակ, սահմանելով այն կետը, որից հետո պետաիրավական լծակներով օժտված սուբյեկտն այլևս զրկվում է անձին որոշակի վարչական պատասխանատվության միջոցով ծանրաբեռնելու իրավական և փաստական հնարավորությունից:

Վաղեմության ժամկետի առնչությամբ տեսաբանների մոտեցումները տարբեր են: Որոշների կարծիքով՝ վաղեմության ժամկետը լրանալուց հետո բացառվում է մեղավորին պատասխանատվության ենթարկելու կամ իրեն նշանակված պատիժը կիրառելու հնարավորությունը (Коваль, 1979, էջ 175–179):

Տեսաբանների մոտ տեսակետները տարբեր են նաև վաղեմության ժամկետների բնույթը սահմանելիս: Տեսաբաններից որոշների կարծիքով՝ վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետները բնութագրվում են որպես ընթացակարգային ժամկետներ (Дугенец, 1995, էջ 34), մինչդեռ այլ տեսաբանների կողմից վաղեմության ժամկետների բնույթը սահմանելիս, վաղեմության ժամկետները ճանաչում են որպես նյութական ժամկետ, բայց նշում են, որ դրանք պետք է հաշվի առնվեն գործընթացում (Панова, 2000, էջ 357): Կան տեսաբաններ, որոնք ոչ միայն տարբերակում են վարչական պատասխանատվության ժամկետները նյութականի և ընթացակարգայինի, այլև տարբերակում են հարկադրանքի ներգործության ժամկետներն այս երկուսից (Դանիելյան, 2002, էջ 185), միաժամանակ նույն հեղինակը մեկ այլ աշխատանքում մասնավորեցնում է, որ վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները կայուն են, դրանք որևէ կերպ, որևէ մարմնի կողմից չեն կարող վերանայվել (Դանիելյան, 2007, էջ 174):

Եզրակացություն անելով վաղեմության ժամկետների երկակի բնույթի վերաբերյալ՝ պայմանավորված դրանց կիրառմամբ ինչպես նյութական, այնպես էլ ընթացակարգային իրավունքի նորմերում, որոշ տեսաբաններ նշում են, որ «վաղեմության ժամկետներ» ձևակերպման ներքո անհրաժեշտ է հասկանալ այն դատողությունը, ըստ որի՝ այդ ժամկետի ավարտը հանգեցնում է վարչական իրավախախտման գործով վարույթի իրականացման անհնարինության (Мещерякова, 2011, էջ 36–37):

Բնականաբար քննարկվող դատողությունների հիմքում ընկած է ոչ միայն

ընդհանուր վաղեմության ժամկետների ընկալումը, այլև հատուկ վաղեմության ժամկետների ընկալումը:

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանն իր կողմից կայացված որոշման մեջ, անդրադառնալով վարչական պատասխանատվության վաղեմության ընդհանուր և հատուկ ժամկետներին նշել է, որ վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության հատուկ ժամկետների սահմանումը, որոնք ժամանակի ընթացքում ավելացել են ընդհանուր ժամկետի համեմատ, ունի ողջամիտ արդարացում և թելադրված է զգալի կազմակերպչական, դատավարական և այլ ջանքերի անհրաժեշտությամբ՝ վարչական իրավախախտումների որոշ տեսակների օբյեկտիվ առանձնահատկությունների պատճառով (Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի 14.02.2013 թվականի թիվ 4-Ռ որոշումը):

Խնդրահարույց են նաև վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետի հաշվարկի ելակետի ընկալման շուրջ առկա կարգավորումները, մասնավորապես ներկայումս առկա կանոնակարգումը հանգում է նրան, ըստ որի՝ վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում,իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ նախատեսված հատուկ դեպքերի, սակայն կանոնակարգված չէ «շարունակվող» և «տևող» հասկացությունների իրավական բովանդակությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով ընդհանրապես«տևող» և «շարունակվող» իրավախախտումների հասկացությունների բացակայությանը, արձանագրել է, որ հիմնախնդիրը պայմանավորված է ոչ թե վեճի առարկա նորմի տարակերպ մեկնաբանություններով, այլ պարզապես օրենսդրի կողմից օրենքում կիրառված հասկացությունները հստակեցված չլինելով, ուստի վերջինս գտել է, որ հասկացությունների բացակայությունն իրավակարգավորման բաց է, որը պետք է հաղթահարվի ՀՀ Ազգային ժողովի իրավասության շրջանակներում (ՀՀ Սահմանադրական դատարանի 08.04.2014 թվականի թիվ ՍԴՈ-1143 որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վարչական պատասխանատվություն վաղեմության ժամկետներն անցնելուն՝ որպես վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանք արձանագրել է հետևյալը. «Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածում օրենսդիրը նախատեսել է անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հատուկ ժամկետներ, որոնց անցնելու դեպքում կատարված արարքը կորցնում է իր հանրային վնասակարությունը, և անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից, քանի որ այդ ժամկետի լրանալուց հետո վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելը դառնում է աննպատակահարմար: Փաստորեն, վաղեմության ժամկետն անցնելը վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանք է. վաղեմության ժամկետն անցած լինելու դեպքում անձին վարչական պատասխանատվությունից ազատելն իրավասու վարչական մարմնի

պարտականությունն է, այլ ոչ թե հայեցողական լիազորությունը: Ըստ այդմ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածը վաղեմության ժամկետի լրանալը դիտում է որպես վարչական գործով վարույթը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործ չի կարող հարուցվել, իսկ հարուցված վարչական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետները:» (ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/10555/05/13 վարչական գործով 26.12.2016 թվականի որոշում):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական մարմինը պետք է հաշվի առնի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու, գործի նյութեր ձեռք բերելու և դրանք գործի քննության համար լիազորված մարմնին (պաշտոնատար անձին) տրամադրելու, վերջինիս կողմից դրանք ստանալու ու վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված ժամկետը, որպիսի ժամկետի լրանալուց հետո՝ անկախ գործի քննության համար լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և մյուս նյութերը ստանալու օրվանից, կատարված արարքը կկորցնի իր հանրային վնասակարությունը, և անձը կազատվի վարչական պատասխանատվությունից (ՀՀ վճռաբեկ դատարանի 01.12.2022 թվականի թիվ ՎԴ/8942/05/19 վարչական գործով որոշում):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետի կասեցման ինստիտուտին, արձանագրել է, հետևյալը. «Վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետ սահմանելով՝ օրենսդիրն ունեցել է այդ ժամկետից դուրս անձին պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը բացառելու նպատակ՝ հիմք ընդունելով այդ ժամկետի ավարտից հետո կատարված արարքի հանրային վնասակարության կորուստը և վարչական տույժ նշանակելու աննպատակահարմարությունը: Արդյունքում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով պարզ և հստակ սահմանվել են անձին վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետները, որոնց լրանալը բացառում է վարչական գործով վարույթը: Ուստի այն դեպքում, երբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածում որպես բացառություն նախատեսված չէ այնպիսի հիմք, որի առկայության պայմաններում բաց է թողնվում նույն հոդվածով սահմանված երկամսյա ժամկետը, ապա տվյալ դեպքում այդ ժամկետի բաց թողնելու փաստը հիմք է վարչական իրավախախտման վերաբերյալ գործ չհարուցելու, իսկ հարուցված վարչական գործի վարույթը կարճելու համար՝ վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

Վերոշարադրյալի ամփոփմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական վարույթի կասեցված լինելու հիմքը՝ որպես բացառություն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդ-

վածում նախատեսված չէ, հետևաբար վարչական ակտի կատարումը կասեցված լինելու հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելու ժամկետն անցնելու դեպքում, վարչական մարմինն այլևս զրկվում է անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունից՝ հաշվի առնելով վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի լրացած լինելու, այսինքն՝ վարչական իրավախախտման գործով վարույթը բացառող հանգամանքի առկայությունը (ՀՀ վճռաբեկ դատարանի ՎԴ/3864/05/20 վարչական գործով 03.11.2022 թվականի որոշում):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով նյութական և դատավարական ժամկետների վերականգնման իրավական խնդրին, արձանագրել է, որ ի տարբերություն դատավարական ժամկետների, որոնց գլխավոր առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանք սահմանում են կոնկրետ դատավարական գործողության իրականացման ժամանակահատվածը, չեն կարող ազդել նյութական վիճելի իրավահարաբերության բովանդակության, այդ թվում՝ դատավարության մասնակիցների միջև նյութաիրավական վեճի դրական կամ բացասական լուծման վրա, նյութաիրավական ժամկետները կարգավորում են օրենքով նախատեսված գործողությունը կատարելու կոնկրետ ժամկետ, որն ուղղակիորեն ազդեցություն ունի նյութական վիճելի իրավահարաբերության բովանդակության վրա: Միևնույն ժամանակ, ի տարբերություն դատավարական ժամկետի, որը բաց թողնելու դեպքում օրենսդրորեն հնարավոր է այն վերականգնել՝ հարգելի հիմքերի առկայության պարագայում, նյութաիրավական ժամկետները վերականգնելու օրենսդրական հիմք առկա չէ (ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/3138/05/20 վարչական գործով 17.11.2022 թվականի որոշում):

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն անդամ երկրներում լավ կառավարման վերաբերյալ թիվ CM/Rec(2007)7 հանձնարարականի շրջանակներում, անդրադառնալով վարչական մարմինների կողմից օրինականության սկզբունքի պահպանման հարցին, արձանագրել է, որ պետական մարմինները պետք է գործեն օրենքին համապատասխան: Նրանք չպետք է կամայական միջոցներ ձեռնարկեն, նույնիսկ, երբ գործում են իրենց հայեցողությամբ: Նրանց կողմից կատարված գործունեությունները պետք է համապատասխանեն ներքին օրենսդրությանը, միջազգային իրավունքին և իրավունքի ընդհանուր սկզբունքներին, որոնք կարգավորում են դրանց կազմակերպումը, գործառնությունը և գործունեությունը: Նրանք պետք է իրենց լիազորություններն իրականացնեն միայն այն դեպքում, եթե սահմանված փաստերը և կիրառելի օրենսդրությունը նրանց իրավունք են տալիս դա անել, և բացառապես այն նպատակով, որի համար դրանք տրվել են (Recommendation CM/Rec(2007)7 of the Committee of Ministers to member states on good administration, 2007, էջ 7):

Քննարկում

Նշյալի հաշվառմամբ՝ սույն աշխատանքում հարկ ենք համարում քննարկել վարչական պատասխանատվության վաղեմության իրավական բնույթը,

դրա տեսակները, ժամկետի հաշվարկի մեկնարկային կետը, իրավական վերականգնման հնարավորությունը:

Անդրադառնալով վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետի իրավական բնույթին՝ կարևոր է արձանագրել, որ այն տարբեր տեսաբանների կողմից, ինչպես նաև իրավակիրառ բազմաթիվ սուբյեկտների կողմից պայմանավորված ընկալվում է երկակի: Նրանցից մի մասի մոտեցումը հանգում է նրան, որ վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետն իրենից ենթադրում է նյութական ժամկետ և դրա խախտման պայմաններում պատասխանատվության միջոցի կիրառումը հանգեցնում է անձի նյութական իրավունքի խախտման, իսկ տեսաբանների մյուս մասի կարծիքով՝ վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետն իրենից ենթադրում է ընթացակարգային ժամկետ, որի խաթարումն իր բնույթով չի հանգեցնում նյութական իրավունքի խախտման:

Ինչպես երևում է, վարչական պատասխանատվության վաղեմության իրավական բնույթի վերաբերյալ դոկտրինում առկա քննարկումը (նյութական կամ ընթացակարգային) պայմանավորված է ընդհանուր իրավահարաբերություններում նյութական և ընթացակարգային բաղադրիչների անքակտելի փոխկապակցվածության ակնհայտ դրսևորմամբ: Եթե վաղեմության ժամկետի նյութահիրավական բնույթն ապահովում է վարչահիրավական հարաբերությունների դիմացկունությունը ու կայունությունը, պետական կառավարման որոշակիությունն ու կանխատեսելիությունը, ապա վաղեմության ժամկետների ընթացակարգային բնույթը կարգի է բերում վարչական ընթացակարգային իրավահարաբերությունները և երաշխավորում վարչական ընթացակարգային գործողությունների արդյունավետությունը՝ դրդելով պետությանը՝ ի դեմս լիազոր մարմինների, օպերատիվ գործելուն:

Անդրադառնալով վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետի իրավական վերականգնման հնարավորության հարցին՝ հարկ է արձանագրել, որ այս համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, արդյոք վարչական պատասխանատվության վարույթը երկարաձգելը կամ կասեցնելը կարող է վերականգնել վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետը:

Տվյալ հարցն ուղղակի փոխկապակցված է վաղեմության ժամկետի իրավական բնույթի հետ, քանի որ, եթե խոսում ենք նյութական ժամկետի մասին, ապա այն ենթակա չէ վերականգնման, իսկ եթե խոսում ենք ընթացակարգային ժամկետի մասին, ապա այն կարող է վերականգնվել: Նյութահիրավական ժամկետները կարգավորում են օրենքով նախատեսված գործողությունը կատարելու կոնկրետ ժամկետ, որն ուղղակիորեն ազդեցություն ունի նյութական վիճելի իրավահարաբերության բովանդակության վրա: Միևնույն ժամանակ, ի տարբերություն ընթացակարգային ժամկետների, որոնք բաց թողնելու դեպքում հնարավոր է այն վերականգնել՝ հարգելի համարվելու հիմքերի առկայության պարագայում, նյութահիրավական ժամկետները վերականգնելու հիմք օրենսդրական մակարդակով նախատեսված չեն, ուստի այն չի կարող վերականգնվել:

Վերացարկվելով ասվածից՝ հարկ է նկատել, որ ներկայումս ՀՀ–ում գործող կանոնակարգումների իրավական զարգացումներն ընթացել են այն ուղղությամբ, որ վաղեմության ժամկետն ընկալվում է որպես նյութական ժամկետ և բացառվում է դրա որևէ եղանակով վերականգնման իրավական հնարավորությունը, սակայն շրջանառության մեջ գտնվող Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծն այն տեղափոխում է ընթացակարգային ժամկետների տիրույթ ուղիղ նախատեսելով, որ վարչական վարույթի կասեցման դեպքում սառեցվում է վաղեմության ժամկետի հոսքը:

Մեր կարծիքով՝ վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն ունի խառը նյութական և ընթացակարգային բնույթ, և վաղեմության ժամկետում ընթացակարգային տարրի առկայությունը թույլ է տալիս այն վերագրել վարչական ընթացակարգային ժամկետների շարքին:

Վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները, արտացոլելով վարչական ընթացակարգային իրավահարաբերությունների կառավարման ոլորտի վրա ժամանակի ազդեցության եզակի կողմը, ունեն էական առանձնահատկություն՝ այն է՝ ժամկետի վերականգնում կիրառելու անհնարինությունը: Վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները, որոնք արտացոլում են նյութական և ընթացակարգային իրավահարաբերությունների կառավարման ոլորտի վրա ժամանակի ազդեցության եզակի կողմը, ունեն էական առանձնահատկություն, որը նրանց ժամկետի վերականգնում կիրառելու անհնարինությունն է:

Վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի ավարտը հանգեցնում է լիազորված մարմնի կողմից որոշակի վարչական ընթացակարգերի գործողությունների իրականացման անհնարինության, և փաստորեն, որոշակի ժամկետի լրանալու հետևանքով իրավասությունը դադարում է: Վարչական պատասխանատվության ինստիտուտի նպատակների առնչությամբ այս ժամկետի ավարտը կատարում է «կործանարար» գործառույթ՝ վարչական իրավախախտման կոնկրետ գործով վարույթ հարուցելը բացառելու տեսքով:

Նմանօրինակ դատողության տրամաբանության ներքո, ընկալելով վաղեմության ժամկետի իրավական ազդեցությունը վարչական պատասխանատվության հնարավորության առնչությամբ, հարկ է արձանագրել, որ այն ունի և՛ նյութական և՛ ընթացակարգային բնույթ, որպիսի պայմաններում գործ ունենք ոչ թե առանձնացված հատուկ ընդգծված նյութական կամ հատուկ ընդգծված ընթացակարգային բնույթ ունեցող ինստիտուտի հետ, այլ դրանց համաձուլվածքի հետ:

Վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետի նյութական բնույթը հանգում է նրան, որ դրա խախտումը հանգեցնում է օրինականության սկզբունքի խախտման, քանի որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրավասու են կատարել այնպիսի գործողություններ, որի համար լիազորված են օրենսդրությամբ, իսկ օրենսդրությամբ սահմանված ժամկետից դուրս գործողության կատարումը նույնացվում է առհասա-

րակ իրավասություն չունենալու պայմաններում գործողություն կատարելուն: Հատկանշական է նաև, որ դրա նյութաիրավական ազդեցությունն ընդգծվում է նաև այն դատողությամբ, որ վաղեմության ժամկետի նյութաիրավական բնույթը երաշխավորում է վարչաիրավական հարաբերությունների կայունությունը և պետական կառավարման կանխատեսելիությունը, քանի որ վարչական հարկադրանքը և դրա տեսակ հանդիսացող վարչական պատասխանատվությունը հանդիսանում են պետական կառավարման գործիքներ:

Վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետի ընթացակարգային բնույթը հանգում է նրան, որ այն իրենից ենթադրում է որոշակի ընթացիկ գործողություն կատարելու ժամկետ, սահմանելով դրա սկիզբը, ընթացքը, հաշվարկման կարգը և ավարտը, որպիսի փաստի ուժով այն բերում է որոշակի ընթացակարգային հետևանքների, օրինակ՝ կարճվում է վարչական պատասխանատվության վարույթը, որով եզրափակվում է վարչական վարույթը:

Անդրադառնալով վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետի իրավական բնույթին՝ կարևոր է արձանագրել, որ այն դրսևորվում է ընդհանուր և հատուկ ժամկետների սահմանման ձևով: Նման պայմաններում, թեև ընդհանուր ժամկետի ամրագրումը կարևոր է իրավական կայունության տեսանկյունից, սակայն իրավախախտումների միջև այս հարթության մեջ հավասարության նշան դնելն իր մեջ պարունակում է խնդրահարույց ասպեկտներ:

Ասվածի հաշվառմամբ հարկ է նշել, որ վարչական պատասխանատվության վաղեմության ընդհանուր ժամկետն իրենից ներկայացում է կանոնակարգում, որը կիրառելի է բոլոր զանցանքների դեպքում՝ բացառությամբ օրենսդրությամբ հատուկ սահմանված բացառությունների, որոնք ունեն հատուկ կարգավորման անհրաժեշտություն: Այն դեպքում, երբ որևէ իրավախախտման վաղեմության ժամկետի հաշվարկի համար բացակայում է օրենսդրորեն սահմանված հատուկ ժամկետը՝ գործում է այն կանխավարկածը, որ կիրառելի է վաղեմության ժամկետի հաշվարկի ընդհանուր ժամկետը:

Ի տարբերություն ընդհանուր ժամկետների՝ վարչական պատասխանատվության հատուկ ժամկետներն իրենցից ենթադրում են շեղում ընդհանուր կանոնից և կիրառելի չեն որևէ այլ իրավախախտման համար, բացի այն կոնկրետ իրավախախտումից, որի շուրջ առաջացող իրավահարաբերությունները կանոնակարգելու համար դրանք ընդունվել են և որի սահմանումը թելադրված է զգալի կազմակերպչական, վարույթային և այլ ջանքերի գործադրման անհրաժեշտությամբ՝ զանցանքի տվյալ տեսակի օբյեկտիվ առանձնահատկությունով պայմանավորված:

Անդրադառնալով վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետի հաշվարկի մեկնարկային կետին և, ըստ այդմ, նաև այս հարթության մեջ վաղեմության ժամկետների տեսակներին՝ կարևոր է արձանագրել, որ օրենսդրորեն կարող են սահմանվել նաև հատուկ մեկնարկային կետեր և ժամկետի հաշվարկի հատուկ մեխանիզմներ, սակայն ընդհանուր կանոնը հանգում է նրան, որ վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում,իսկ շա-

րունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ նախատեսված հատուկ դեպքերի, սակայն կանոնակարգված չէ «շարունակվող» և «տևող» հասկացությունների իրավական բովանդակությունը:

Եթե ավարտված իրավախախտման մասով խնդիրն ավելի քան պարզ է և հաշվարկը պետք է կատարել վերջին գործողությունը կատարելու պահից, ապա մյուս տեսակների պարագայում առաջ է գալիս իրավական խնդիր՝ կապված օրենսդրական բացի հետ:

Ասվածի համատեքստում, անդրադառնալով «շարունակվող իրավախախտում» ձևակերպման բովանդակությանը, հարկ է ընդգծել, որ շարունակվող վարչական իրավախախտումը միասնական դիտավորությամբ միավորված երկու և ավելի նույնական արարքների համակցությունն է, այսինքն՝ կատարվող երկու և ավելի համասեռ գործողությունների ամբողջություն: Արարքը՝ որպես շարունակվող որակելու կարևոր նախապայմաններն են հանդիսանում.

1. Պետք է առկա լինեն երկու և ավելի գործողություններ: Տվյալ տարրի էությունը հանգում է նրան, որ եթե խոսում ենք մեկ գործողության մասին, ապա գործ ունենք ոչ թե շարունակվող, այլ ավարտված իրավախախտման հետ, ուստի, որպեսզի հնարավոր լինի քննարկել շարունակականության հարցը պետք է առկա լինեն մեկը գերազանցող միացված գործողություններ:

2. Կատարվող գործողություններից յուրաքանչյուրը պետք է ուղղված լինի իրավախախտման ամբողջացման ընդհանուր նպատակին: Այս տարրի էությունը կայանում է նրանում, որ կատարվող գործողությունները պետք է ունենան մեկ միասնական նպատակ, այն է՝ իրավախախտում որակվող ընդհանուր արարքն ամբողջացնելը:

3. Կատարվող գործողությունները պետք է լինեն նույնական: Այս տարրի էությունը կայանում է նրանում, որ կատարվող գործողությունները պետք է լինեն համասեռ և դրանց տարանջատման կամ առանձին գնահատման պարագայում պետք է բացառվի դրա այլ կերպ ընկալելու փաստական հնարավորությունը:

4. Կատարվող գործողությունները պետք է ընկալվեն և գնահատվեն մեկ համակցության մեջ: Այս տարրի էությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր գործողություն առանձին գնահատելու պարագայում կխոսենք ոչ թե շարունակության, այլ ավարտված գործողություն մասին, ուստի դրանք անհրաժեշտ է գնահատել մեկ համակցության մեջ, ընդհանուր և համակարգային:

Նշվածի հաշվառմամբ՝ հանգում ենք շարունակվող իրավախախտման հետևյալ ձևակերպմանը.

Վարչական իրավախախտումը համարվում է շարունակվող, եթե օբյեկտիվ իրականության տվյալ ժամանակահատվածում կատարվում են երկու և ավելի նույնական գործողություններ, որոնցից յուրաքանչյուրն առանձին վերցված ուղղված է իրավախախտում որակվող ընդհանուր արարքն ամբողջացնելուն և որը կարող է գնահատվել մեկ համակցության մեջ:

Անդրադառնալով «տևող իրավախախտում» ձևակերպման բովանդակությանը՝ հարկ է նշել, որ այն ունի հետևյալ տարրերի ամբողջությունը.

1. Պետք է առկա լինի անձի վրա դրված պարտականություն: Եթե խոսք է գնում պարտականության մասին, ապա այդ պարտականությունը ոչ թե պետք է լինի որևէ անձի կամարտահայտությունը, այլ օրենքի իմպերատիվ պահանջ, որն անձը պարտավոր է կատարել:

2. Անձը պետք է չկատարի կամ ոչ պատշաճ կատարի իր վրա դրված պարտականությունը: Նման իրավիճակում պետք է դրսևորվի անգործություն, որը հանգեցնում է պարտականությունը չկատարելուն կամ ոչ պատշաճ կատարելուն:

3. Պարտականության չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը պետք է հանգեցնի իրավախախտման: Պարտականության կատարման պահանջի չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը պետք է նախատեսված լինի օրենսդրությամբ որպես վարչական իրավախախտում և դրա համար առաջ գա վարչական պատասխանատվություն:

4. Պարտականության չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը պետք է դրսևորվի տևական և չընդհատվի: Այս տարրի էությունը կայանում է նրանում, որ ի տարբերություն շարունակվող իրավախախտման, որի պարագայում համասեռ գործողությունները կարող էին ընդհատվել, տևող իրավախախտման պարագայում գործողությունները պետք է լինեն ժամանակի մեջ ձգված և չընդհատվեն:

Նշվածի հաշվառմամբ հանգում ենք տվյալ իրավախախտման հետևյալ ձևակերպմանը.

Վարչական իրավախախտումը համարվում է տևող, եթե անձը ժամանակի մեջ ձգված, տևական և առանց ընդհատումների չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում իր վրա օրենքով դրված պարտականությունը, որը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը հանգեցնում է վարչական պատասխանատվության:

Եզրակացություն

Ամփոփելով հոդվածի արդյունքները՝ նպատակահարմար է արձանագրել հետևյալ եզրահանգումները.

1. Վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետի նյութական բնույթը հանգում է նրան, որ դրա խախտումը հանգեցնում է օրինականության սկզբունքի խախտման, քանի որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրավասու են կատարել այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ, իսկ օրենսդրությամբ սահմանված ժամկետից դուրս գործողության կատարումը նույնացվում է առհասարակ իրավասություն չունենալու պայմաններում գործողություն կատարելուն:

2. Վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետի ընթացակարգային բնույթը հանգում է նրան, որ այն իրենից ենթադրում է որոշակի ընթացիկ գործողություն կատարելու ժամկետ՝ սահմանելով դրա սկիզ-

բը, ընթացքը, հաշվարկման կարգը և ավարտը, որպիսի փաստի ուժով այն բերում է որոշակի ընթացակարգային հետևանքների, օրինակ՝ կարձվում է վարչական պատասխանատվության վարույթը, որով եզրափակվում է վարչական վարույթը:

3. ՀՀ-ում Վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն ունի խառը նյութական և ընթացակարգային բնույթ, և վաղեմության ժամկետում ընթացակարգային տարրի առկայությունը թույլ է տալիս այն վերագրել վարչական ընթացակարգային ժամկետների շարքին և ժամկետային հաշվարկների կիրառման տեսանկյունից հիմք ընդունել ընթացակարգային ժամկետներին բնորոշ իրավական տրամաբանություն:

4. Վարչական իրավախախտումը համարվում է շարունակվող, եթե օբյեկտիվ իրականության տվյալ ժամանակահատվածում կատարվում են երկու և ավելի նույնական գործողություններ, որոնցից յուրաքանչյուրն առանձին վերցված ուղղված է իրավախախտում որակվող ընդհանուր արարքն ամբողջացնելուն, որը կարող է գնահատվել մեկ համակցության մեջ:

5. Վարչական իրավախախտումը համարվում է տևող, եթե անձը ժամանակի մեջ ձգված, տևական և առանց ընդհատումների չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում իր վրա օրենքով դրված պարտականությունը, որը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը հանգեցնում է վարչական պատասխանատվության:

Օգտագործված գրականության ցանկ

Դանիելյան, Գ. (2007), *Վարչական պատասխանատվությունը ՀՀ-ում:* Երևան:

Դանիելյան, Գ. (2002), *Վարչական պատասխանատվություն:* Երևան:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք՝ ընդունված 06.12.1985 թվականին, ՀՍՍՀԳՍ 1985/23

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի նախագիծ, https://www.e-draft.am/projects/6259/about

ՀՀ Սահմանադրական դատարանի 08.04.2014 թվականի թիվ ՍԴՈ-1143 որոշումը:

ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/10555/05/13 վարչական գործով 26.12.2016 թվականի որոշումը:

ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/8942/05/19 վարչական գործով 01.12.2022 թվականի որոշումը:

ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/3864/05/20 վարչական գործով 03.11.2022 թվականի որոշման տեքստում

ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/3138/05/20 վարչական գործով 17.11.2022 թվականի որոշման տեքստում

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի 14.02.2013 թ. թիվ 4-Ռ որոշումը:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի անդամ երկրների լավա կառավարման վերաբերյալ առաջարկություն՝ CM/Rec(2007)7, 20.06.2007 թվական, https://rm.coe.int/cmrec-2007-7-of-the-cm-to-ms-on-good-administration/16809f007c

Коваль, Л. В. (1979). *Административно-деликтное отношение.* Киев.
Дугенец, А. С. (1995). *Процессуальные сроки в производстве по делам об административных правонарушениях:* дис. ... канд. юрид. наук. М.
Панова, И. В. (2000). *Актуальные проблемы административного процесса в Российской Федерации:* дис. ... д-ра юрид. наук. Екатеринбург.
Мещерякова, Т. Р. (2011). *Сроки в законодательстве об административных правонарушениях:* дис. ... канд. юрид. наук. Екатеринбург.

Завен Смбатян
Преподаватель Европейского университета Армении,
Начальник отдела по расследованию дел об административных правонарушениях юридического управления аппарата мэрии Еревана,
кандидат юридических наук
Эл. адрес: zavensmbatyan@mail.ru

ПРАВОВОЙ ХАРАКТЕР СРОКА ДАВНОСТИ АДМИНИСТРАТИВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ

В статье рассматриваются сущность института срока давности привлечения к административной ответственности и истечение срока давности как обстоятельства, исключающего административную ответственность, условия его применения, а также существующие в данной сфере проблемы. Анализируются прецедентные решения, принятые по данному вопросу.

Целью настоящей статьи является установление на основе правовых исследований единых суждений относительно сущности этих сроков, а также их исчисления, относительно возможности прекращения производства по основанию истечения срока исковой давности для лица, совершившего противоправное деяние или проявившего бездействие, а также закрепление более эффективных и характерных норм в действующем законодательном поле Республики Армения на основе теоретического и практического опыта.

В статье рассматривается такой вопрос, который в большей или меньшей степени нашел отражение в работах разных авторов, однако стоящие перед учреждением вопросы, составляющие содержание темы, не были предметом отдельной комплексной научной дискуссии и юридического анализ, который был выполнен в данной работе.

Ценность и практическая значимость этой работы, а также новизна проявляются в формулировании единых представлений об Институте срока давности административной ответственности и оптимизации существующих нормативных актов:

Ключевые слова: срок давности, ответственность, административный, исключающий, правонарушение, срок.

Zaven Smbatyan
Lecturer at the European University of Armenia,
Head of the Department for Investigation of Cases on Administrative Violations of the Legal Department of the Yerevan Municipality Staff,
Ph.D. in Law
Email: zavensmbatyan@mail.ru

THE LEGAL NATURE OF THE LIMITATION PERIOD FOR ADMINISTRATIVE LIABILITY

The article discusses in detail the administrative act as an element enshrined in the Constitution of the Republic of Armenia and an integral part of proper administration.

The article discusses the essence of the institution of limitation of administrative liability and the expiration of the limitation period as circumstances excluding administrative liability, the conditions of its application and problems in this area.

The article discusses an issue that has been reflected to one degree or another in the works of various authors, but has not been the subject of a separate comprehensive scientific discussion and legal analysis of the problems arising around the institute that makes up the content of the topic, which was an attempt to do in this work.

The value and practical significance of this work, as well as its novelty, is manifested in the formulation of common perceptions around the institute of the statute of limitations for administrative liability and the improvement of existing regulations.

Key words: statute of limitations, liability, administrative, excluding, offence, term.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2025թ. օգոստոսի 27-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2025թ. սեպտեմբերի 23-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2025թ. դեկտեմբերի 19-ին: